2011 թվականի հունվար-ապրիլ ամիսներին ՀՀ պետական բյուջեի կատարման ամփոփ բնութագիրը[1]

2011 թվականի հունվար-ապրիլ ամիսների ընթացքում ՀՀ պետական բյուջեի եկամուտները կազմել են շուրջ 254.8 մլրդ դրամ, իսկ ծախսերը՝ 257.2 մլրդ դրամ, որոնք համապատասխանաբար 63.4%-ով և 56.2%-ով ապահովել են ՀՀ կառավարության առաջին կիսամյակի ծրագրային ցուցանիշների կատարումը: Պետական բյուջեի տարեկան ծրագրային ցուցանիշները կատարվել են եկամուտների գծով՝ 30.3%-ով, ծախսերի գծով՝ 27.4%-ով:

ՀՀ պետական բյուջեի եկամուտները

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ պետական բյուջեի եկամուտներն աճել են 9%-ով կամ 21 մլրդ դրամով, որն ապահովվել է հարկերի, պետական տուրքերի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների հաշվին, որոնք 10.5%-ով (22.9 մլրդ դրամով) գերազանցել են նախորդ տարվա նույն ցուցանիշը: Հաշվետու ժամանակահատվածում այլ եկամուտները նվազել են 6.5%-ով (903 մլն դրամով), իսկ արտաքին աղբյուրներից ստացվել են ընդամենը 146.8 մլն դրամ պաշտոնական դրամաշնորհներ՝ նախորդ տարվա 1.2 մլրդ դրամի դիմաց:

Պետական բյուջեի եկամուտների 94.8%-ը ձևավորվել է հարկային եկամուտների, պետական տուրքերի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների, 5.1%-ը՝ այլ եկամուտների, 0.1%-ը՝ պաշտոնական դրամաշնորհների հաշվին: «Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 11-րդ կետին համապատասխան պետական բյուջեում ներառվել են նաև պետական

[1] Պետական բյուջեի եկամուտներում, ծախսերում և պակասուրդի ֆինանսավորման աղբյուրներում ներառված չեն արտաքին աղբյուրներից ֆինանսավորվող նպատակային ծրագրեր իրականացնող գրասենյակներով շրջանառվող միջոցները:

հիմնարկների արտաբյուջետային ֆոնդերի միջոցները, որոնց եկամուտները հաշվետու ժամանակահատվածում կազմել են 5.6 մլրդ դրամ կամ առաջին կիսամյակում ծրագրված մուտքերի 56.5%-ը:

2011 թվականի հունվար-ապրիլ ամիսների ընթացքում ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել շուրջ 201.4 մլրդ դրամ հարկային եկամուտներ ու պետական տուրքեր, որոնք կազմել են կիսամյակային ծրագրի 64%-ը: 2010 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ նշված եկամուտներն աճել են 10.1%-ով կամ 18.5 մլրդ դրամով: Հարկային եկամուտների աճը հիմնականում պայմանավորված է ավելացված արժեքի հարկի, շահութահարկի և եկամտահարկի մուտքերի աճով:

Հարկերի և տուրքերի 47.9%-ն ապահովվել է ավելացված արժեքի հարկի հաշվին, որը կազմել է 96.4 մլրդ դրամ և 9.4%-ով կամ 8.2 մլրդ դրամով գերազանցել նախորդ տարվա նույն ցուցանիշը: ԱԱՀ-ի մուտքերից 57.9 մլրդ դրամը ստացվել է ՀՀ սահմանին հարկումից, ավելի քան 38.5 մլրդ դրամը՝ ներքին շրջանառությունից:

Պետական բյուջեի հարկային եկամուտների ու պետական տուրքերի 5.8%-ն ապահովվել է ակցիզային հարկի հաշվին՝ կազմելով շուրջ 11.8 մլրդ դրամ: Մասնավորապես՝ հանրապետություն ներմուծվող ենթաակցիզային ապրանքների հարկումից ստացվել է ավելի քան 7.3 մլրդ դրամ, հանրապետությունում արտադրվող ենթաակցիզային ապրանքների հարկումից՝ 4.4 մլրդ դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ակցիզային հարկի մուտքերը նվազել են 5.2%-ով կամ 648.1 մլն դրամով, ինչը պայմանավորված է Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ենթաակցիզային ապրանքներից մուտքերի 17.1%-ով կամ 1.5 մլրդ դրամով անկմամբ: Միևնույն ժամանակ, հանրապետությունում արտադրվող ենթաակցիզային ապրանքների հարկումից ստացված մուտքերն աճել են 24.4%-ով կամ շուրջ 864.7 մլն դրամով:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների 18.3%-ն ապահովվել է շահութահարկի հաշվին՝ կազմելով շուրջ 36.8 մլրդ դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ շահութահարկի մուտքերն աճել են 16.4%-ով կամ 5.2 մլրդ դրամով:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել շուրջ 24.1 մլրդ դրամ եկամտահարկ՝ ապահովելով հարկերի և տուրքերի 12%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ եկամտահարկի մուտքերն աճել են 7%-ով կամ 1.6 մլրդ դրամով:

Մաքսատուրքի գծով մուտքերը կազմել են շուրջ 10.1 մլրդ դրամ կամ հարկերի և տուրքերի 5%-ը ՝ 2.4%-ով գերազանցելով 2010 թվականի համապատասխան ցուցանիշը:

2011 թվականի հունվար-ապրիլ ամիսների ընթացքում պետական բյուջե են մուտքագրվել շուրջ 6 մլրդ դրամ պետական տուրքեր՝ կազմելով կիսամյակային ծրագրի 62%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված մուտքերն աճել են 17.1%-ով կամ 870.2 մլն դրամով:

Հաշվետու ժամանակահատվածում գործունեության առանձին տեսակներից գանձվել են շուրջ 6.6 մլրդ դրամ հաստատագրված վճարներ՝ ապահովելով հարկային եկամուտների ու պետական տուրքերի 3.3%-ը: Նշված ցուցանիշը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 6.6%-ով կամ 463.6 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է գործունեության որոշ տեսակների՝ հարկման ընդհանուր դաշտ անցնելու հանգամանքով:

2011 թվականի հունվար-ապրիլ ամիսների ընթացքում ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել ավելի քան 3.7 մլրդ դրամ բնօգտագործման և բնապահպանական վճարներ, որոնք նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել են 43.9%-ով կամ ավելի քան 1.1 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված օգտակար հանածոների

արդյունահանման և այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցներից օդային ավազան վնասակար նյութեր արտանետելու համար գանձվող վճարների աճով:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջե են մուտքագրվել 6 մլրդ դրամի այլ հարկեր: Մասնավորապես՝ 2.3 մլրդ դրամ է կազմել «Կոնցեսիայի մասին» ՀՀ օրենքով սահմանված ռոյալթին, 1 մլրդ դրամ՝ ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության տրամադրման (գործողության ժամկետի երկարաձգման) վճարները, 510 մլն դրամ՝ ԱՏԳԱԱ 2208 ապրանքային ծածկագրին դասվող օղու ներմուծման թույլտվության համար սակագնային քվոտայի վճարը, 798 մլն դրամ՝ ճանապարհային վճարները, 183.1 մլն դրամ՝ կոնցեսիոն վճարը, 210.5 մլն դրամ՝ հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարները, շուրջ 561 մլն դրամ՝ հարկային օրենսդրության խախտման համար «Հարկերի մասին» ՀՀ օրենքով սահմանված տուգանքները, 18.5 մլն դրամ՝ արտոնագրային վճարները և 379.2 մլն դրամ՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նյութական խրախուսման ֆոնդի եկամուտները: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ այլ հարկերի փաստացի ցուցանիշն աճել է 66%-ով կամ 2.4 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է ռոյալթիի և ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության տրամադրման վճարների աճով:

Պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով բյուջետային եկամուտները կազմել են շուրջ 40.2 մլրդ դրամ՝ 67%-ով ապահովելով կիսամյակի ծրագիրը: 2010 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ պարտադիր սոցիալական ապահովության վճարներն աճել են 12.3%-ով կամ 4.4 մլրդ դրամով:

2011 թվականի հունվար-ապրիլ ամիսների ընթացքում դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում 146.8 մլն դրամ է մուտքագրվել հիմնարկների

արտաբյուջետային հաշիվներին՝ կազմելով կիսամյակի ծրագրով նախատեսվածի 16.1%-ը: Հաշվետու ժամանակահատվածում Եվրամիությունից նախատեսվել էր ստանալ շուրջ 7 մլրդ դրամ դրամաշնորհ՝ ընդհանուր բյուջետային աջակցության ծրագրի շրջանակներում, որը, սակայն, չի ստացվել: Արդյունքում դրամաշնորհների կիսամյակային ծրագիրը կատարվել է 1.9%-ով:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեի այլ եկամուտները կազմել են ավելի քան 13 մլրդ դրամ 68.5%-ով ապահովելով կիսամյակի ծրագրային ցուցանիշը: Նշված գումարից 5 մլրդ դրամը կազմել են ՀՀ պետական հիմնարկների արտաբյուջետային եկամուտները, որոնց կիսամյակային ծրագիրը կատարվել է 64.2%-ով: Ծրագրի կատարումը հիմնականում ապահովվել է ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ծախսերի նկատմամբ եկամուտների գերազանցումից մուտքերի և ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի օգտագործման տոկոսավճարների հաշվին, որոնք գերազանցել են առաջին կիսամյակի ծրագրային ցուցանիշները համապատասխանաբար 60.1 և 1.5 տոկոսով: Բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարների գծով կիսամյակի ծրագիրը կատարվել է 96.2 %-ով (շուրջ 1.9 մլրդ դրամ): Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված մուտքերը նվազել են 60.7%-ով կամ ավելի քան 2.9 մլրդ դրամով: Վերջին հանգամանքով է հիմնականում պայմանավորված 2010 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ այլ եկամուտների 6.3%-ով կամ շուրջ 903 մլն դրամով անկումը: Պետական պահուստի հողերի վարձակալության և օգտագործման դիմաց գանձվող վարձավճարների գծով եկամուտները կազմել են շուրջ 31.7 մլն դրամ, իսկ պետական անտառների և անտառային հողերի օգտագործման վճարների

գծով նախատեսված 10.5 մլն դրամի դիմաց փաստացի մուտքեր չեն ստացվել: Հաշվետու ժամանակահատվածում ավելի քան 1.8 մլրդ դրամ է մուտքագրվել պետական բյուջե իրավախախտումների համար կիրառվող պատժամիջոցներից՝ 59.6%-ով ապահովելով նախատեսված ցուցանիշը և 4%-ով կամ 69.4 մլն դրամով գերազանցելով նախորդ տարվա մուտքերը: Շուրջ 7.9 մլրդ դրամ է մուտքագրվել օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պետական բյուջե մուտքագրվող այլ եկամուտների գծով, կազմելով առաջին կիսամյակի ճշտված պլանով նախատեսվածի 76.4%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված մուտքերի աճը կազմել է 30.3% կամ ավելի քան 1.8 մլրդ դրամ:

ՀՀ պետական բյուջեի ծախսերը

2011 թվականի հունվար-ապրիլ ամիսների ընթացքում ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին կատարվել են 257.2 մլրդ դրամի ծախսեր՝ կազմելով կիսամյակային ծրագրի 56.2%-ը: Ծրագրից շեղումը արձանագրվել է և ընթացիկ ծախսերի, և ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների գծով: Մասնավորապես՝ 236.3 մլրդ դրամ են կազմել ընթացիկ ծախսերը, 20.9 մլրդ դրամ՝ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները: Հաշվետու ժամանակահատվածում 3.6 մլրդ դրամի ծախսեր են կատարվել պետական հիմնարկների արտաբյուջետային միջոցների հաշվին՝ կազմելով ծրագրվածի 26.4%-ը: 2010 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ պետական բյուջեի ծախսերն աճել են 5.8%-ով կամ 14.2 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է կենսաթոշակների, պետական պարտքի սպասարկման, պայմանագրային այլ ծառայությունների ձեռքբերման, այլ ծախսերի և հիմնական միջոցների ծախսերի աճով:

Ընթացիկ ծախսերը հաշվետու ժամանակահատվածում կազմել են 236.3 մլրդ դրամ՝ 57.7%-ով կատարելով կիսամյակային ծրագիրը: Նախորդ տարվա համեմատ ընթացիկ ծախսերն աճել են 5.6%-ով կամ 12.6 մլրդ դրամով: Ընթացիկ ծախսերից 22.2 մլրդ դրամ տրամադրվել է պետական հիմնարկների աշխատողների աշխատավարձերի վճարմանը, 1.5 մլրդ դրամ՝ պարտադիր սոցիալական ապահովության վճարներին, որոնք կազմել են կիսամյակային ծրագրի համապատասխանաբար 61.4%-ը և 55.4%-ը: Նախորդ տարվա հունվար-ապրիլ ամիսների համեմատ նշված ծախսերն աճել են համապատասխանաբար 5.4%-ով և 3.8%-ով: Ծառայությունների և ապրանքների ձեռքբերման նպատակով պետական բյուջեից օգտագործվել է 44 մլրդ դրամ, որը կազմել է ծրագրի 54%-ը և 6.3%-ով գերազանցել նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը: Հաշվետու ժամանակահատվածում 10.9 մլրդ դրամ հատկացվել է պետական պարտքի սպասարկմանը՝ կազմելով ծրագրի 52.9%-ը: Մասնավորապես՝ նշված գումարից 8.2 մլրդ դրամը տրամադրվել է ներքին, 2.7 մլրդ դրամը՝ արտաքին պարտքի սպասարկմանը: Պետական պարտքի սպասարկման ծախսերը 43%-ով գերազանցել են նախորդ տարվա նույն ցուցանիշը, որը տեղի է ունեցել հիմնականում ներքին պետական պարտքի սպասարկման ծախսերի աճի հաշվին: Պետք է ընդգծել, որ գնաճի դեմ պայքարի շրջանակներում ֆինանսական շուկայում դիտարկվող տոկոսադրույքների ընդհանուր աճի միտումը գրեթե չի անդրադառնում պետական պարտատոմսերի եկամտաբերության վրա, քանի որ միջին և երկարաժամկետ առումներով դրամական շուկայի մասնակիցների կողմից շարունակում են դիտարկվել որպես ներդրման ամենակայուն և հուսալի միջոց:

Անցած ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեից տրամադրվել են 5.3 մլրդ դրամի սուբսիդիաներ՝ կազմելով կիսամյակային ծրագրի 58.3%-ը և 6.8%-ով զիջելով նախորդ տարվա նույն ցուցանիշը:

26.1 մլրդ դրամ են կազմել պետական բյուջեից տրամադրված դրամաշնորհները, որից 25.4 մլրդ դրամը տրամադրվել է պետական հատվածի այլ մակարդակներին, 515.4 մլն դրամը՝ միջազգային կազմակերպություններին և 179 մլն դրամը՝ օտարերկրյա պետություններին: Մասնավորապես՝ համայնքների բյուջեներին տրամադրվել են 10.8 մլրդ դրամի դոտացիաներ, որոնք պահպանվել են նախորդ տարվա մակարդակին: Դրամաշնորհների կիսամյակային ծրագիրն ընդհանուր առմամբ կատարվել է 54.3%-ով, իսկ նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 7.5%-ով:

2011 թվականի հունվար-ապրիլ ամիսների պետական բյուջեի ծախսերի 32.8%-ն ուղղվել է սոցիալական նպաստներին և կենսաթոշակներին, որոնք կազմել են 84.4 մլրդ դրամ՝ 62.1%-ով ապահովելով կիսամյակային ծրագրի կատարումը և 6.9%-ով գերազանցելով նախորդ տարվա նույն ցուցանիշը: Մասնավորապես՝ նշված գումարից 62.5 մլրդ դրամ (63.5%) են կազմել կենսաթոշակները, 21.9 մլրդ դրամ (58.3%)՝ նպաստները:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեի միջոցներից 41.8 մլրդ դրամ տրամադրվել է այլ ծախսերին՝ 55.4%-ով ապահովելով կիսամյակային ծրագրի կատարումը և 6.5%-ով գերազանցելով նախորդ տարվա նույն ցուցանիշը:

Պետական բյուջեի ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները կազմել են 20.9 մլրդ դրամ կամ կիսամյակային ծրագրի 43.4%-ը: Մասնավորապես՝ 21.1 մլրդ դրամ են կազմել ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը, որոնք կատարվել են 43.7%-ով: 167.9 մլն դրամ է մուտքագրվել ոչ ֆինանսական ակտիվների օտարումից՝ կիսամյակային ծրագրով նախատեսված 13.7 մլն դրամի և նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 126.1 մլն դրամի դիմաց: Նախորդ տարվա առաջին կիսամյակի համեմատ ոչ ֆինանսական ակտիվների հետ

գործառնությունների ցուցանիշն աճել է 8.3%-ով՝ հիմնականում պայմանավորված շենքերի և շինությունների գծով ծախսերի ավելացմամբ:

ՀՀ պետական բյուջեի պակասուրդը

2011 թվականի հունվար-ապրիլ ամիսներին ՀՀ պետական բյուջեն կատարվել է 2.4 մլրդ դրամ պակասուրդով՝ նախատեսված շուրջ 56.2 մլրդ դրամի դիմաց: Շեղումը հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ բյուջեի ազատ միջոցներից կիսամյակային ծրագրով նախատեսված 56.4 մլրդ դրամից օգտագործվել է 13.6 մլրդ դրամ: Բացի այդ, չեն ստացվել արտաքին աղբյուրներից նախատեսված 22.9 մլրդ դրամի վարկային միջոցները: Անցած ժամանակահատվածում ներքին աղբյուրների գծով ֆինանսավորման ցուցանիշը կազմել է 18.7 մլրդ դրամ, իսկ արտաքին ֆինանսավորման գծով՝ շուրջ -16.3 մլրդ դրամ:

Պակասուրդի ֆինանսավորման ներքին աղբյուրներում շուրջ 6.2 մլրդ դրամ են կազմել փոխառու միջոցները, 12.6 մլրդ դրամ՝ ֆինանսական ակտիվները: Մասնավորապես՝ 6.2 մլրդ դրամ ստացվել է գանձապետական պարտատոմսերից: Մուրհակների մարման նպատակով կիսամյակային ծրագրով նախատեսված վճարումները կատարվել են 63.3%-ով: Այդ նպատակով պետական բյուջեից տրամադրվել է 13.9 մլն դրամ: Շուրջ 1.3 մլրդ դրամ ստացվել է տրամադրված ներքին վարկերի վերադարձից՝ 90.9%-ով կատարելով ծրագրված ցուցանիշը:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ ռեզիդենտներին պետական բյուջեից տրամադրվել են 2.3 մլրդ դրամի վարկեր (ծրագրվածի 93.4%-ը), որից 1 մլրդ դրամը՝ Ռուսաստանի Դաշնության կողմից Հայաստանի Հանրապետությանը 2009 թվականին տրամադրված պետական վարկի միջոցներից տնտեսության կայունացման վարկավորման ծրագրի 1-ին

բաղադրիչի ֆինանսավորման, 936.7 մլն դրամը՝ «Ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով մարդատար տրանսպորտային միջոցներ ներմուծող ֆիզիկական անձանց (նախորդ ամսվա 1 մլրդ դրամի դիմաց, պայմանավորված չօգտագործված վարկային միջոցների վերադարձով), 326 մլն դրամը՝ «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից հիմնադրված վարկային կազմակերպությանը բյուջետային վարկեր տրամադրելու նպատակով:

Անցած ժամանակահատվածում պետական բյուջեի պակասուրդի արտաքին ֆինանսավորումը կազմել է շուրջ -16.3 մլրդ դրամ, որից -3.0 մլրդ դրամը՝ փոխառու միջոցների, -13.3 մլրդ դրամը՝ ֆինանսական ակտիվների գծով: Նշված շուրջ 3.0 մլրդ դրամն ուղղվել է արտաքին պարտավորությունների մարմանը, որից 1.8 մլրդ դրամը հատկացվել է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ծրագրերի գծով պարտքի մարմանը, 51.9 մլն դրամ՝ ԳԶՄՀ, 115.8 մլն դրամ՝ ՎԶԵԲ-ի նկատմամբ ունեցած պարտքի մարմանը, 572.2 մլն դրամ է տրամադրվել էլեկտրաէներգիայի հաղորդման և բաշխման համակարգի ծրագրի գծով Ճապոնիայի նկատմամբ պարտքի մարմանը, 412.0 մլն դրամ՝ ԱՄՆ ապրանքային վարկերի մարմանը, 16.5 մլն դրամ՝ ԱԷԿ-ի վառելիքի չոր պահպանման համակարգի ծրագրի գծով Ֆրանսիայի նկատմամբ պարտքի մարմանը:

12.7 մլրդ դրամ տրամադրվել է ԼՂՀ-ին որպես միջպետական վարկ: Վրաստանի կողմից Հայաստանի նկատմամբ ունեցած վարկային պարտավորությունների գծով կատարվել է 120.9 մլն դրամի վճարում՝ նախատեսված 124.9 մլն դրամի փոխարեն: Ստացված գումարից 49.1 մլն դրամը նախորդ տարվա պարտավորությունն է և Վրաստանի կողմից փոխանցվել է 2010 թվականի դեկտեմբերին, սակայն գանձապետական

միասնական հաշվին մուտքագրվել է ընթացիկ տարվա հունվար ամսին: Բաժնետոմսերի և կապիտալում այլ մասնակցության ձեռքբերմանն ուղղվել է 589.1 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 99.8%-ը: Հաշվետու ժամանակահատվածում 72.1 մլն դրամով ավելացել է արտաքին աղբյուրներից ստացված արտաբյուջետային դրամաշնորհային միջոցների մնացորդը: